ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> նոյեմբերի 2013 թվականի N 107 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑ 8 ՇԵՆՔ, 1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 352,1 (ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆԵՐԿՈՒ ԱՄԲՈՂՋ ՄԵԿ ՏԱՍՆՈՐԴԱԿԱՆ) ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2013 թվականի հունիսի 4-ից Շիրակի մարզի Գյումրի քաղաքում գործում է ոստիկանության երկու բաժին՝ Կումայրի և Մուշ: Մուշի բաժինը իր գործունեությունը ծավալում է նորակառույց շենքում, որտեղ առկա են աշխատանքային նորմալ պայմաններ, ինչը չի կարելի ասել Կումայրի բաժնի վերաբերյալ, քանի որ այն, տեղակայված լինելով Գյումրու Կայարանամերձ հրապարակ-2 հասցեում գտնվող շենքում, զբաղեցնում է թվով յոթ սենյակ, որոնցում իրենց գործունեությունն են ծավալում Հայաստանի Հանրապետության Ոստիկանության երկու՝ Կումայրի և պետական պահպանության գլխավոր վարչության Շիրակի մարզային ստորաբաժանումները:

Ելնելով Ոստիկանության վերոգրյալ երկու ստորաբաժանումների շենքային և աշխատանքային պատշաճ պայմանների ապահովման անհրաժեշտությունից, ընդառաջելով Հայաստանի Հանրապետության Ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Համբարյանի խնդրանքին (գրությունը Գյումրու քաղաքապետարանում մուտքագրված՝ 2013 թվականի հոկտեմբերի 31-ին, N11/2043 թվագրմամբ) և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Գյումրիի Պարույր Սևակ 8 շենք, 1/1 հասցեում գտնվող 352,1 (երեք հարյուր հիսուներկու ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր տարածքը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 26072013-08-0029 վկայական) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության Շիրակի մարզային ստորաբաժանմանը 25 (քսանհինգ) տարի ժամկետով:

Կողմ (16) **Դեմ (1)** **Ձեռնպահ (3)**

Ա.Ադամյան_____ Լ.Բաբսեղյան_____

Վ.Հունանյան_____

Գ.Ադամյան_____ Ա.Բաղեյան _____

Ա.Բաղրամյան_____ Ե. Պողոսյան _____

Մ.Գաբոյան_____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եղիգարյան _____

Գ.Թաթարյան_____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Ն.Մեսրոպյան_____

Ռ.Մխիթարյան_____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2013թ. նոյեմբերի 12

ք.Գյումրի